# Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր[1]

**ՀՀ հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման 2017թվականի դասընթացի թեստավորման**

## Ներքին աուդիտ

**1. Նախապես սահմանված որակը պահպանելով՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների նվազեցումը հանդիսանում է**

*֍) խնայող գործառույթ,*

*«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, 5-րդ մաս*

**2. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը նախորդող տարվա ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվությունը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի մեկը ներկայացնում է.**

*֍) լիազոր մարմնին,*

*«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 12, 3-րդ մաս*

**3. Ռիսկը չափվում է.**

*֍) ազդեցությամբ և տեղի ունենալու հավանականությամբ,*

*«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, 8-րդ մաս*

**4. Ներքին աուդիտորը չի կարող իրականացնել.**

*֍) կազմակերպության կառավարման գործառույթ,*

*«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 6, 6-րդ մաս*

**5. Ներքին աուդիտի տարեկան ծրագիրը կազմում է.**

*֍) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,*

*«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 8, 2-րդ մաս, 1-ին կետ*

**6. Կազմակերպության ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը հաստատվում են մինչև տվյալ տարվա.**

*֍) հունվարի 1-ը,*

*«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, 7-րդ մաս*

**7. Ո՞վ է հաստատում կազմակերպության ներքին աուդիտի տարեկան ծրագիրը.**

*֍) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,*

*«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, 4-րդ մաս*

**8. Ներքին աուդիտի կոմիտեն ներքին աուդիտի տարեկան ծրագիրը.**

*֍) քննարկում է,*

*«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, 3-րդ մաս*

[1] Ներկայացված է հարցը, ճիշտ պատասխանը և հղումը համապատասխան իրավական ակտին

**9. Քանի՞ տարվա կտրվածքով է կազմվում կազմակերպության ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը.**

*ա) 3,*

***«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, 1-ին կետ***

**10. Աշխատանքային խմբերում կարող են ընդգրկվել փորձագետներ, երբ.**

*ա) պահանջվում են հատուկ գիտելիքներ ու հմտություններ,*

***«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 7, 3-րդ մաս, 2-րդ կետ***

**11. Ո՞վ է հաստատում ներքին աուդիտի աուդիտորական առաջադրանքը.**

*ա) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,*

***«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, 6-րդ մաս***

**12. Իրականացված յուրաքանչյուր ներքին աուդիտի համար պատրաստվում է հաշվետվություն, որի նախագիծը տրամադրվում է.**

*ա) ներքին աուդիտի ենթարկված միավորի ղեկավարին,*

***«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 11, 2-րդ մաս***

**13. Աուդիտի հաշվետվությունը հաստատում է.**

*ա) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,*

***«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 11, 3-րդ մաս***

**14. Ներքին աուդիտի հաշվետվությունը քննարկում և որոշումն ընդունում են.**

*ա) կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն,*

***«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 11, 4-րդ մաս***

**15. Նշվածներից ո՞րը մեխանիկական հսկողության գործընթացի տեսակ չէ.**

*ա) հաշվապահական համակարգից արտահանված նյութական արժեքների մնացորդի համեմատումը գույքագրման արդյունքում արձանագրված փաստացի մնացորդների հետ,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 254-րդ կետ***

**16. Շրջանակների սահմանափակման, ինչպես նաև տվյալ սահմանափակման կիրառման հնարավոր հետևանքների մասին ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարն առաջինը տեղեկացնում է.**

*ա) սահմանափակումներն առաջադրող ստորաբաժանման ղեկավարին,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 17-րդ կետ***

**17. Ներքոնշյալներից ո՞րն է հանդիսանում ավտոմատացված հսկողության գործընթացի տեսակ.**

*ա) կազմակերպության ֆինանսահաշվապահական բաժնում ներդրված է տվյալների բազայի խմբագրման համար ծածկագրային համակարգ,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 254-րդ կետ***

**18. Մասնակիորեն ավտոմատացված հսկողական գործընթացի տեսակ է.**

*ա) հաշվապահական համակարգից արտահանված նյութական արժեքների մնացորդի համեմատումը գույքագրման արդյունքում արձանագրված փաստացի մնացորդների հետ,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 254-րդ կետ***

**19. Կազմակերպության պատասխանատու անձը ստուգում է, որ կազմակերպություն մուտք գործեն միայն կազմակերպության աշխատակիցները՝**

ստուգելով վերջիններիս կողմից ցուցադրվող վկայականները: Այս հսկողության գործընթացն իրենից ներկայացնում է.

*☸) մեխնիկական հսկողական տարր,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 254-րդ կետ***

**20. Կազմակերպության գլխավոր հաշվապահը ստուգում է հաշվապահական ծրագրի կողմից հաշվարկված մաշվածության ծախսերը: Այս հսկողական գործընթացն իրենից ներկայացնում է.**

*☸) մասնակի ավտոմատացված հսկողական տարր,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 254-րդ կետ***

**21. «Հայավտոկայարան» ՓԲԸ-ում գլխավոր հաշվապահը պարբերաբար համակարգչային ծրագրից արտահանում է դրամական հոսքերի հաշվետվությունը և համեմատում գանձապահի կողմից վարվող դրամարկղի գրքում կատարված գրանցումների հետ: Այս հսկողական գործընթացն իրենից ներկայացնում է.**

*☸) մասնակի ավտոմատացված հսկողական տարր,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 254-րդ կետ***

**22. Գլխավոր հաշվապահի կողմից պարբերաբար իրականացվող բանկային քաղվածքների և հաշվապահական տվյալների համադրումը հանդիսանում է.**

*☸) մեխնիկական հսկողական տարր,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 254-րդ կետ***

**23. Մասնակի ավտոմատացված հսկողական տարրն իրականացվում է.**

*☸) անձի կողմից՝ ձեռքով և համակարգչային ծրագրում օպերացիոն գործողությունների միջոցով,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 254-րդ կետ***

**24. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պատասխանատու չէ.**

*☸) կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների կազմման համար,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 122-րդ կետ***

**25. Ներքին աուդիտի ռեսուրսներում չեն ներառվում.**

*☸) ներքին աուդիտի կոմիտեի անդամները,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 122-րդ կետ***

**26. Արտաքին աուդիտորների գործունեությունը և վերջիններիս աշխատանքները ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքների հետ համակարգման նկատմամբ հսկողությունն իրականացնում են.**

*☸) կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 129-րդ կետ***

**27. Արտաքին աուդիտորների կատարողականի արդյունավետության և օգտավետության գնահատման համար պատասխանատու է.**

*☸) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 135 կետ***

**28. Հսկողության գործընթացները չեն կարող լինել**

*☸) համապարփակ,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 178 կետ***

**29. Հսկողության գործընթացները լինում են.**

*֎) բացահայտող,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 178 կետ***

**30. Հսկողության գործընթացները լինում են.**

*֎) ուղղորդող,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 178 կետ***

**31. Աուդիտի վերլուծական ընթացակարգերը չեն ներառում.**

*֎) կազմակերպության ծախսերի ստուգումը դեպի համապատասխան սկզբնական հաշվառման փաստաթղթեր,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 289-րդ կետ***

**32. Կազմակերպությունում հիմնական ռիսկերի հայտնաբերման և այդ ռիսկերը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ հսկողության գործընթացների ներդրման վերջնական պատասխանատուներն են**

*֎) կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 241-րդ կետ***

**33. Եթե ներքին աուդիտորը և ներքին աուդիտի ենթարկված միավորի ղեկավարն առաջադրանքի արդյունքների վերաբերյալ ընդհանուր համաձայնության չեն գալիս, ապա.**

*֎) առաջադրանքի արդյունքների մասին հաշվետվության մեջ պետք է նշել նրանց երկուսի դիրքորոշումները և անհամաձայնության պատճառները,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 337-րդ կետ***

**34. Ղեկավարության կողմից իրականացվող հսկողության գործընթացները ներառում են հետևյալ գործողությունները.**

*֎) կանխարգելում, բացահայտում, ուղղորդում,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 08/12/2011թ. N 974-Ն հրաման, 178-րդ կետ***

**35. Եթե ներքին աուդիտորը շարունակաբար չբարձրացնի իր մասնագիտական հմտությունները, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակը, ապա ներքին աուդիտորների վարքագծի հիմնական սկզբունքներից կարող է խախտվել.**

*֎) կարողունակությունը,*

***ՀՀ կառավարության 11/08/2011թ. N 1233-Ն որոշում, Հավելված N 2, 13-րդ կետ***

**36. Բարձր կարևորության գործառույթները նրանք են, որոնք.**

*֎) իրականացվում են կառավարության կամ կազմակերպության գերակա խնդիրներին հասնելու համար, կամ նշված գործառույթի չիրականացումը կամ ոչ պատշաճ իրականացումը կարող է ձախողել ամբողջ կազմակերպության գործունեությունը կամ բերել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված խոշոր չափի ֆինանսական կորուստների,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 30/11/2012թ. N 1050-Ն հրաման, 27-րդ կետ***

**37. Միջին կարևորության գործառույթները նրանք են, որոնք.**

*֎) իրականացվում են կազմակերպության նպատակներին հասնելու համար, սակայն, դրանց մասնակի ձախողումը չի բերում ֆինանսական հետևանքի կամ չի ձախողում կազմակերպության ամբողջ աշխատանքները,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 30/11/2012թ. N 1050-Ն հրաման, 28-րդ կետ***

**38. Ցածր կարևորության գործառույթները նրանք են, որոնք.**

*ա) ունեն հիմնականում օժանդակող նպատակ, այսինքն իրականացվում են անկախ կազմակերպության ռազմավարական խնդիրներից,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 30/11/2012թ. N 1050-Ն հրաման, 29-րդ կետ***

**39. Ներքին աուդիտորների վերապատրաստման գործընթացը կանոնակարգում, կազմակերպում և համակարգում է.**

*ա) «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Լիազոր մամինը,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 21/08/2014 թ N 541-Ն հրաման, 4-րդ հոդված***

**40. Վերապատրաստվող աուդիտորների համար վերապատրաստման դասընթացների և գործնական պարապունքների ընդհանուր տևողությունը պետք է կազմի**

*ա) տարեկան առնվազն 30 ժամ,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 21/08/2014 թ N 541-Ն հրաման, 10-րդ հոդված***

**41. Ներքին աուդիտորների տվյալ տարվա վերապատրաստման հայտերը ե՞րբ են լրացվում ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգում**

*ա) մինչև նախորդ տարվա հոկտեմբերի 1-ը,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 21/08/2014 թ N 541-Ն հրաման, 13-րդ հոդված***

**42. Վերապատրաստման ենթակա, սակայն արձակուրդում, հղիության և ծննդաբերության, երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում, պարտադիր զինվորական ծառայության կամ գործուղման մեջ գտնվող, ժամանակավոր անաշխատունակ աուդիտորը ենթակա է վերապատրաստման.**

*ա) աշխատանքի ներկայանալուց հետո եռամսյա ժամկետում,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 21/08/2014 թ N 541-Ն հրաման, 18-րդ հոդված***

**43. Ո՞վ է պատասխանատու հանրային հատվածի կազմակերպությունում աուդիտորների վերապատրաստման գործընթացի մասնակցության ապահովման համար.**

*ա) աուդիտորին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 21/08/2014 թ N 541-Ն հրաման, 5-րդ կետ***

**44. Ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները տրամադրում են.**

*ա) հանրային ոլորտում ներքին աուդիտի մշակման և իրականացման ընդհանուր ցուցումներ, սակայն չի ընդգրկում տեխնիկական և մեթոդական առումով ողջ հանրային ոլորտում հանդիպող բոլոր դեպքերը,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 4-րդ կետ***

**45. Երևանի քաղաքապետարանում ներքին աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարը հանդիսանում է կրթության վարչության նախկին աշխատակիցը: Նշել ներքին աուդիտորի անկախությանը սպառնացող ռիսկի տեսակը.**

*ա) ինքնաստուգման վտանգ,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 44-րդ կետ***

**46. ՀՀ արդարադատության նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը հանդիսանում է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի կինը: Նշել ներքին աուդիտորի անկախությանը սպառնացող ռիսկի տեսակը.**

*❀) մտերմության վտանգ,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 44-րդ կետ*

**47. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարն ընդգրկված է կազմակերպության դեմ հարուցված դատական գործում՝ որպես կազմակերպության շահերը պաշտպանող կողմ: Նշված հանգամանքներում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը.**

*❀) չպետք է իրականացնի աուդիտորական գործունեություն,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 45-րդ կետ*

**48. Ներքին աուդիտի 2017 թվականի համար հաստատված տարեկան ծրագրում նշված լիցենզավորման վարչությունում իրականացվող 2016թ. գործունեության աուդիտորական առաջադրանքում ներգրավված է արտաքին փորձագետ, որը մինչև 2010թ. աշխատել է լիցենզավորման վարչությունում որպես գլխավոր մասնագետ: Նշված հանգամանքներում փորձագետը.**

*❀) կարող է ընդգրկվել աուդիտի առաջադրանքի խմբում,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 47-րդ կետ*

**49. Առաջադրանքի պլանավորման փուլը մեկնարկում է.**

*❀) առաջադրանքի աշխատանքային խմբի ընտրությամբ և կազմամբ,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 171-րդ կետ*

**50. Աուդիտի առաջադրանքի համար սահմանված ժամկետները չպետք է գերազանցեն.**

*❀) ներքին աուդիտի տարեկան ծրագրում ընդգրկված ժամանակահատվածը,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 175-րդ կետ*

**51. Առաջադրանքի պլանավորման փուլում նախատեսվում են հանդիպումներ.**

*❀) աշխատանքային խմբի անդամների և աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի հետ,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 178-րդ կետ*

**52. Աուդիտի առաջադրանքի նպատակները պետք է համահունչ լինեն.**

*❀) ներքին աուդիտի ստորաբաժանման ռազմավարական և տարեկան ծրագրերում ներառված նպատակների հետ,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 189-րդ կետ*

**53. Ստորև նշվածներից ո՞րը չի հանդիսանում ներքին հսկողության գործընթացի օրինակ.**

*❀) կազմակերպության աշխատակիցների աշխատավարձի հաշվարկումը,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 197-րդ կետ*

**54. Ի՞նչ աուդիտորական հաստատում չի տրամադրում ակտիվների ստուգման աուդիտի տեխնիկան.**

*❀) իրավունքներ և պարտականություններ,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 208-րդ կետ*

**55. Ընտրանքային ռիսկը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է.**

*֍) մեծացնել ընտրանքի ծավալը,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 241-րդ կետ***

**56. Կազմակերպության ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը.**

*֍) հանդիսանում է աուդիտի երեք տարվա պլանավորման փաստաթուղթ,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 77-րդ կետ***

**57. Ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը ենթակա է վերանայման.**

*֍) տարեկան առնվազն մեկ անգամ,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 80-րդ կետ***

**58. Աուդիտի ենթակա տարրերի միջավայրի նախանշումից հետո ներքին աուդիտի ստորաբաժանումը կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի հետ քննարկում և լրացնում է.**

*֍) ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթ,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 89-րդ կետ***

**59. Ռիսկերի գնահատման տեղեկագիրը կազմվում (լրացվում) է.**

*֍) կազմակերպության միավորների կողմից,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 93-րդ կետ***

**60. Ռիսկի գնահատման տեղեկագրում միավորի յուրաքանչյուր գործառույթ և կամ ենթահամակարգ գնահատվում է.**

*֍) ռիսկի առաջացման հավականականության և ռիսկի ազդեցության տեսանկյուններից, տալով 1-ից 4 թվային մեծությամբ գնահատական,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 93-րդ կետ***

**61. Ո՞վ է կազմակերպում աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի անդամների համար մեկնարկային հանդիպում աուդիտի ենթակա ստորաբաժանման ղեկավարի հետ.**

*֍) աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարը,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 178-րդ կետ***

**62. Համապատասխանության աուդիտ կամ.**

*֍) իրավական աուդիտ,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 24-րդ կետ***

**63. Աուդիտորական առաջադրանքի իրականացման փուլերից է առաջադրանքի պլանավորումը, առաջադրանքի իրականացումը, հաշվետվությունների պատրաստումը և.**

*֍) վերստուգման գործընթացը,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 165-րդ կետ***

**64. Միջանկյալ հաշվետվությունների կազմումն արդյո՞ք ազատում է վերջնական հաշվետվություն կազմելու պատասխանատվությունից.**

*֍) ոչ,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 295-րդ կետ***

**65. Ներքին աուդիտորը գյուղական համայնքներ ծրագրերի իրականացման պետական հիմնարկում ստուգում է, թե արդյոք դեկտեմբեր ամսվա էլեկտրաէներգիայի**

**ծախսի գծով հունվար ամսին ստացված հաշիվ ապրանքագիրը գրանցվել է դեկտեմբեր ամսին: Ներքին աուդիտորը ստուգում է էլեկտրաէներգիայի ծախսերի.**

*֍) ճիշտ ժամանակաշրջանում արտացոլումը,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 206 -րդ կետեր***

**66. Անհրաժեշտ աուդիտորական ապացույց ասելով հասկանում ենք.**

*֍) ձեռքբերված աուդիտորական ապացույցների որակ,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 200-րդ կետ***

**67. Բավարար աուդիտորական ապացույց ասելով հասկանում ենք.**

*֍) ձեռքբերված աուդիտորական ապացույցների քանակ,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 200-րդ կետ***

**68. Հսկողական համակարգի թեստերն առավելագույնս օգտագործվում են.**

*֍) համակարգի գնահատման աուդիտում,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 202-րդ կետ***

**69. «Ամբողջականություն» աուդիտորական հաստատումը նախատեսում է, որ.**

*֍) գոյություն չունեն աուդիտի ենթարկվող միավորի կողմից չգրանցված գործառնություններ և դեպքեր, որոնք պետք է գրանցվեին որոշակի ժամանակաշրջանի ընթացքում,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 206-րդ կետ***

**70. «Ճիշտ ժամանակաշրջանում արտացոլում» աուդիտորական հաստատումը նախատեսում է, որ.**

*֍) աուդիտի ենթարկվող միավորի կողմից գրանցված գործառնությունները և դեպքերը գրանցվել են հաշվապահական համակարգում այն ժամանակաշրջանում, որին վերաբերում են,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 206-րդ կետ***

**71. «Ճշգրտություն» աուդիտորական հաստատումը նախատեսում է, որ.**

*֍) կազմակերպության կողմից գրանցված գործառնությունները և դեպքերը պատշաճորեն գրանցված են աուդիտի ենթարկվող միավորում,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 206-րդ կետ***

**72. ՀՀ պաշտպանության նախարարության ներքին աուդիտորը թիվ 15469 զինվորական մասում աուդիտորական առաջադրանք իրականացնելիս ստուգում է, թե արդյոք ընտրանքում ներառված երթուղային թերթիկները հաստատված են ապրանքանյութական բաժնի պետի կողմից: Ներքին աուդիտորն իրականացնում է.**

*֍) հսկողության համակարգի թեստ,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 202-203-րդ, 248-252-րդ կետեր***

**73. Եթե աուդիտի ենթարկվող միավորում աուդիտորը վերահաշվարկում է աշխատավարձից պահված հարկերը, ապա ներքին աուդիտորը.**

*֍) իրականացնում է մանրամասների ստուգման թեստ՝ ստուգելով աշխատավարձի ծախսերի ճշգրտությունը, տեղի ունենալը և ամբողջականությունը,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 252-րդ կետ***

**74. Ամբողջ կազմակերպության մակարդակով ներքին հսկողության գործընթացի օրինակ է.**

*֍) աշխատակիցների ընդունման պաշտոնապես ընդունված գործընթացներ, որոնք նաև ներառում են նոր աշխատակիցների համար դասընթացների կազմակերպումը և աշխատանքային պարտականությունների մանրամասն նկարագրությունների տրամադրումը,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 197-րդ կետ***

**75. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ֆինանսական բաժնում աշխատավարձի հաշվառումը և վճարումների կատարումն իրականացնում է գլխավոր հաշվապահի տեղակալը: Ներքոնշյալ հսկողության գործընթացներից ո՞րը չի պահպանվում.**

*֍) գործառույթների տարանջատում,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 197-րդ կետ***

**76. Ներքին աուդիտորի թեստի նպատակն է ստուգել, որ աշխատակիցների աշխատավարձը հաշվարկվում է աշխատանքային պայմանագրում նշված դրույքաչափի համաձայն: Այս թեստով ներքին աուդիտորը ստուգում է աշխատավարձի ծախսերի**

*֍) ճշգրտությունը, առկայությունը, ամբողջականությունը և օրինականությունը,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 207-րդ կետ***

**77. Աուդիտի աշխատանքային փաստաթղթերը.**

*֍) բոլոր տարբերակները ճիշտ են,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 330-333-րդ կետեր***

**78. Ստուգաթերթերը և հարցաշարերը.**

*֍) բոլոր տարբերակները ճիշտ են,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 378-րդ կետեր***

**79. Ռիսկի չափորոշիչներին տրվող ուղղիչ գործակիցները լինում են.**

*֍) հաստատուն, փոփոխուն,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 98-րդ կետ***

**80. Եթե միավորը նախորդ տարում ընդգրկվել է աուդիտի ընտրանքում, ապա ռիսկի չափորոշիչին տրվում է.**

*֍) 0.5 գործակից,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, հավելված N 5***

**81. Եթե միավորն ընդգրկվել է ընտրանքում ռազմավարական ծրագրի առաջին տարում, սակայն չի ընդգրկվել նախորդ տարում, ապա ռիսկի չափորոշիչին տրվում է.**

*֍) 1 գործակից,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, հավելված N 5***

**82. Եթե միավորը չի ընդգրկվել ռազմավարական ծրագրում, ապա ռիսկի չափորոշիչին տրվում է.**

*֍) 1.5 գործակից,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, հավելված N 5***

**83. Ո՞վ է հաստատում ներքին աուդիտի ստորաբաժանման ընտրանքային չափորոշիչների քանակը և կազմը.**

*֍) կազմակերպության ղեկավարը, համաձայնեցնելով ներքին աուդիտի կոմիտեի հետ,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 101-րդ կետ*

**84. Ներքին աուդիտի ստորաբաժանման ռեսուրսները հաշվարկվում են.**

*֍) յուրաքանչյուր տարի,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 118-րդ կետ*

**85. Աուդիտորներն ընտրանքային ստուգման կիրառումը նպատակահարմար չեն համարում, եթե.**

*֍) բոլոր պատասխանները ճիշտ են,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 236-րդ կետ*

**86. Թեստի նպատակը կարող է համարվել իրականացված, և հետագա որևէ լրացուցիչ աշխատանք չի պահանջվում, եթե.**

*֍) թեստի արդյունքում ընտրանքում թերություններ չեն հայտնաբերվում,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 245-րդ կետ*

**87. Հայտնաբերված թերությունների վերաբերյալ արձանագրությունը տրամադրվում է.**

*֍) աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարին,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 267-րդ կետ*

**88. Մանրամասների ստուգման թեստերը չեն ներառում.**

*֍) ցուցանիշների և միտումների ուսումնասիրություններ, ռեգրեսիոն վերլուծություններ, խելամտության թեստավորում,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 202-208-րդ և 248-253 կետեր*

**89. ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտորը ցանկանում է ստուգել լիցենզավորման գործընթացի նախագծի արդյունավետությունը: Ներքին աուդիտորը նախ և առաջ իրականացնում է.**

*֍) հսկողության գործընթացի ուսումնասիրում և նկարագրում գծապատկերների միջոցով,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 210-212-րդ կետեր*

**90. Քայլերի հաջորդական ստուգման թեստը հանդիսանում է.**

*֍) հսկողության համակարգի թեստ,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 222-227-րդ կետեր*

**91. Առաջադրանքի աշխատանքային ծրագիրը ներառում է.**

*֍) բոլոր տարբերակները ճիշտ են,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման,195-րդ կետ և հավելված N 6*

**92. Հսկողության գործընթացը նկարագրող փաստաթուղթը չի ներառում.**

*֍) հսկողության գործընթացի արդյունքում բացահայտված կամ կանխարգելված դեպքերը,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 214-րդ կետ*

**93. Հսկողության գործընթացները կարող են լինել.**

*֍) մեխանիկական, ավտոմատացված և մասնակի ավտոմատացված,*

*ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 214-րդ կետ, 4-րդ ենթակետ*

**94. Աուդիտի ենթարկվող միավորի ռիսկի գործակցի որոշումը վերջինիս ռիսկի խմբի և կազմակերպության ընդհանուր հսկողության միջավայրի հիման վրա իրականացվում է.**

*֍) աուդիտի ենթարկվող միավորում աուդիտորական թեստեր իրականացնելիս ընտրանքների կազմման նպատակով,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 186-րդ կետ***

**95. Ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի մշակման գործընթացի ո՞ր փուլի ժամանակ է քննարկվում և լրացվում ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթը.**

*֍) հիմնական ուսումնասիրման ենթակա միավորների նախանշման,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 89-րդ կետ***

**96. Ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթը լրացվում է.**

*֍) յուրաքանչյուր տարվա համար,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 89-րդ կետ***

**97. Ռիսկերի վերլուծության նպատակով կիրառվող ուղղիչ գործակիցները ընդունում են հետևյալ արժեքները.**

*֍) 0.1 քայլով տաս նիշանոց սանդղակ՝ չափորոշիչների գործակիցների 0.5-ից 1.5 միջակայքում,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 99-րդ կետ***

**98. Աուդիտի ենթարկվող միավորի ռիսկի գործակիցը կախված է.**

*֍) տվյալ միավորի ռիսկային խմբի գնահատականից և ընդհանուր հսկողության միջավայրի գնահատականից,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 186-րդ կետ***

**99. Հայտնաբերված թերությունների վերաբերյալ ներքին աուդիտի առաջադրանքի աշխատանքային խումբը կազմում է աուդիտի արդյունքների մասին արձանագրություն, որը պետք է պարունակի թերությունների հատկանիշներ: Այդ հատկանիշներից է.**

*֍) չափանիշ, պայման, պատճառ, ազդեցություն,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 266-րդ կետ***

**100. ՀՀ Ոստիկանության հաշվապահական հաշվեկշռում առկա կրեդիտորական պարտավորության մնացորդը ստուգելու նպատակով ներքին աուդիտորը կարող է իրականացնել հետևյալ ըստ էության թեստերը.**

*֍) բոլոր տարբերակները ճիշտ են,*

***ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրաման, 206-րդ, 207-րդ կետեր***

## Պետական գնումներ

**101. Էլեկտրոնային աճուրդը.**

*֍) էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ նոր՝ նվազեցված գների ներկայացման գործընթաց է,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 2***

**102. Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեն.**

*֍) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի քան հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունեցող անձինք,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 6***

**103. Գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը հրապարակում է.**

*֍) ՀՀ ֆինանսների նախարարությունը,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 6***

**104. Գնումների գործընթացին արգելվում է հետևյալ անձանց միաժամանակյա մասնակցությունը.**

*֍) Բոլոր պատասխանները սխալ են,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 7***

**105. Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում.**

*֍) անկախ պայմանագրի գնից,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 11***

**106. Գնման առարկայի բնութագրերը՝**

*֍) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 13***

**107. Գնանշման հարցման ձևով գնումների հայտարարությունները կազմվում են.**

*֍) Հայերեն, ռուսերեն և անգլերեն,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 14***

**108. Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը օրենքով սահմանված կարգով պայմանագիր՝**

*֍) կարող է կնքվել՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 15***

**109. Բացառությամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» և «ե» ենթակետերում նշված պատվիրատուների բաց մրցույթի կիրառման դեպքում հայտերի ներկայացման ժամկետը**

*֍) Առնվազն քառասուն օրացուցային օր է,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 20***

**110. Բաց մրցույթի դեպքում պետության կամ համայնքների՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների համար հայտերի ներկայացման ժամկետը.**

*֍) Առնվազն տասնհինգ օրացուցային օր է, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի երկուհարյուրապատիկը,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 20***

**111. Գնումը կարող է կատարվել գնանշման հարցման ձևով, եթե.**

*֍) Գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 22***

**112. Պատվիրատուն որևէ անձից կատարելով ապրանքի գնում՝ կարող է նույն անձից լրացուցիչ գնում կատարել եթե.**

*֍) Գինը չի գերազանցում սկզբնական գնման պայմանագրի 10%,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 23***

**113. Արգելվում է արդյո՞ք խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները որպես մեկ չափաբաժին՝**

*֍) Այո, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 25***

**114. Հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և . . . :**

*֍) Հակամրցակցային համաձայնության բացակայության վերաբերյալ,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 28***

**115. Բաց մրցույթի դեպքում մասնակցի հայտը ներառում է**

*֍) Բոլոր պատասխանները ճիշտ են,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 30***

**116. Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնման գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է՝**

*֍) Հրավերով,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 30***

**117. Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է՝**

*֍) Լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 32***

**118. Հայտի ապահովումը վճարում է մասնակիցը, եթե՝**

*֍) Բոլոր պատասխանները ճիշտ են,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 32***

**119. Հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող**

*֍) Առաջին աշխատանքային օրը,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 33***

**120. Երբ կարող է կնքվել պայմանագիրը՝ անգործության ժամկետը լրանալուց հետո**

*֍) Ոչ շուտ, քան անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 36***

**121. Էլեկտրոնային աճուրդը հիմնվում է.**

*֍) Միայն գնի վրա,*

***«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 40***

**122.Էլեկտրոնային աճուրդը կարող է կայանալ.**

